



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ղեկավարվելով** «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

**հաշվի առնելով** ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 30.09.2019թ. թիվ 387-Լ որոշմամբ՝ (1) «Փաստաբանի վարքագծի կանոնադրում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին», (2) «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» և (3) ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցերով 2019 թվականի հոկտեմբերի 19-ին հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրված լինելու հանգամանքը,

**նկատի ունենալով** ՀՀ փաստաբանների պալատի 19.10.2019թ. հերթական ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ փաստաբանների պալատի օժանդակության պայմանները և ընթացակարգը սահմանելու անհրաժեշտությունը,

### **Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

**- Հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը՝ համաձայն հավելվածի:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

11 հոկտեմբերի 2019թ.  
թիվ 441-Լ  
ք. Երևան